



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

7 ապրիլի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Տիգրան Թամրազյանի անհատական դիմումի ընդունելիության
հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Տիգրան Թամրազյանը 2018 թվականի մարտի 26-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ, 63-րդ, 72-րդ, 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ Քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ի մասը,

Կամ,

բացահայտել ՀՀ Քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ի մասի սահմանադրաիրավական բովանդակությունը»:

2. Դիմողը գտնում է, որ խնդրո առարկա դրույթի իրավական անորոշությունը, խախտելով ՀՀ Սահմանադրության 3-րդ, 79-րդ հոդվածների պահանջները, չի ապահովում անձի՝ ՀՀ Սահմանադրության 63 և 72-րդ հոդվածներով երաշխավորված՝ հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը, որի անկապտելի մասն է կազմում իրավական որոշակիության հիմնարար սկզբունքը:

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթն իր նկատմամբ կիրառվել է այնպիսի մեկնաբանությամբ, որը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Գրիգոր Գրիգորյանի վերաբերյալ թիվ ԳԴ/0002/01/14 քրեական գործով կայացրած դատական ակտում արտահայտած իրավական դիրքորոշմանը:

Դիմողի կարծիքով՝ խնդրո առարկա գործի շրջանակներում կայացված դատական ակտերով վիճարկվող դրույթին տրվել է նոր մեկնաբանություն, որը հանգեցրել է այդ նորմի տարբերակված կիրառությանը, որի արդյունքում տարբեր գործերով, բայց էապես նման իրավիճակներում գտնվող իրավունքի սուբյեկտների նկատմամբ օրենքը կիրառվել է տարբեր եղանակով՝ առանց տարբերակված վերաբերմունքի համար օբյեկտիվ հիմքերի առկայության:

3. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման, քանի որ դիմողը բարձրացնում է վիճարկվող դրույթի կիրառման իրավաչափության հարց:

Գործի դատավարական նախապատմությունը ցույց է տալիս, որ ՀՀ վճռաբեկ դատարանը 2018թ. հունվարի 23-ի որոշմամբ մերժել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելն այն պատճառաբանությամբ, որ՝ «... բողոքաբերների կողմից չի հիմնավորվել, որ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵՔԴԴ/0295/01/08, ԿԴ1/0025/01/11, ՎԲ-11/08, ԵՔԴԴ/0632/01/08, ԵՇԴ/0115/01/09, ԵԿԴ/0252/01/13, ԵԷԴ/0058/01/10, ԵԷԴ/0030/01/12, ԵԿԴ/0016/11/15 որոշումների մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը»:

Դիմողը վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը հիմնավորելիս շեշտադրում է այն, որ խնդրո առարկա դրույթն իր նկատմամբ կիրառվել է այնպիսի մեկնաբանությամբ, որը տարբերվում է մեկ այլ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի արտա-

հայտած իրավական դիրքորոշումներից: Դիմողը նշում է, որ իր վկայակոչած թիվ ԳԴ/ 0002/01/14 քրեական գործի շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ՝ «...ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով ապացուցման առարկայի շրջանակում՝ որպես հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշ..., ի թիվս այլնի, ընդգրկվում է հանցագործության առարկան:

... Այսինքն, քննարկվող հոդվածով անձին մեղավոր ճանաչելիս գործով ձեռք բերված թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների համակցությամբ պետք է ապացուցվի նաև հանցագործության առարկայի (հրազեն, բացի ողորկափող հրազենից և դրա փամփուշտներից, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր) առկայությունը...»:

ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վերոնշյալ իրավական դիրքորոշումներում հստակ ընդգծված է այն, որ հանցագործության առարկայի առկայությունը պետք է ապացուցվի գործով ձեռք բերված թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների համակցությամբ: Այսինքն, հանցագործության առարկայի առկայության փաստը գնահատողական կատեգորիա է՝ պայմանավորված գործով ձեռք բերված թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների համակցությունից, և այդ փաստին տրված գնահատականը՝ կախված այս կամ այն գործով ձեռք բերված ապացույցների համակցությունից, կարող է տարբեր լինել: Հետևաբար, դիմողի նկատմամբ առաջացած անբարենպաստ հետևանքները նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, և խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկմամբ:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշմամբ սահմանված իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով: Հետևաբար, այս առումով առկա է

դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Տիգրան Թամրազյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

7 ապրիլի 2018 թվականի
ՍԴԴԿՈ/2-12